ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լերմոնտովո համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լերմոնտովո, (0322)68570, lermontovo.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 մայիսի 2014թվականի N 8

## ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն ՀՀ կառավարության 2011 թ-ի դեկտեմբերի 26-ի "Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու մասին" թիվ 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի 17 կետի պահանջների և հիմք ընդունելով "Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի" 05/05/2014 թ-ի , թիվ 50 դրական եզրակացությունը

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է `

1.Լոռու մարզի Լերմոնտովո գյուղական համայնքի վարչական տարածքում գտնվող , համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերից 4,1 հա խոտհարք, ծածկագիր 06-043-0215-0027 փոխադրել արդյունաբերության ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի նպատակային նշանակության , գյուղատնտեսական արտադրական օբյեկտերի կառուցման հողերի գործառնական նշանակության ՝ գազանաբուծական տնտեսություն հիմնելու համար :

2.Առաջարկել համայնքի ղեկավարին իրականացնել իրավունքների պետական գրանցումը և համայնքի հաշվեկշռում կատարել փոփոխություն :

3.Հողամասը աճուրդով օտարելու նպատակով հողամասի մակնարկային գինը սահմանել 9102000 /ինը միլիոն հարյուր երկու հազար/ ՀՀ դրամ , աճուրդի մասնակցության վճարը ՝ 5000 /հինգ հազար/ ՀՀ դրամ , նախավճարի և քայլի չափը ՝ մեկնարկային գնի 5% :

Կողմ -3 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲՈԼՈՏԻՆ ԻՎԱՆ

2. ՄԿՐՏՉՅԱՆ ԱՍՏՂԻԿ

3. ՇՈՒՏՈՎ ԱԼԵՔՍԵՅ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԷԴԻԿ ՉԱԽԱԼՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լերմոնտովո համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լերմոնտովո, (0322)68570, lermontovo.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 ՀՈՒՆԻՍԻ 2014 թվականի N 12

ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ , ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ , ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ և 26-րդ կետերով , ՀՀ «Իրավական ակտերի մասին» օրենքի 60-րդ և 72-րդ հոդվածներով

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հաստատել Լերմոնտովո գյուղական համայնքի ղեկավարի վարձատրության չափը, աշխատակազմի թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համափայն 1 , 2 հավելվածների :

2.Ուժը կորցրած ճանաչել Լերմոնտովո համայնքի ավագանու 2013 թ-ի դեկտեմբերի 16-ի «Լերմոնտովո համայնքի ղեկավարի վարձատրության չափը, աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 27 որոշումը :

3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2014 թ-ի հուլիսի 1-ից :

Կողմ -3 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲՈԼՈՏԻՆ ԻՎԱՆ
2. ՄԿՐՏՉՅԱՆ ԱՍՏՂԻԿ
3. ՇՈՒՏՈՎ ԱԼԵՔՍԵՅ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԷԴԻԿ ՉԱԽԱԼՅԱՆ

Հավելված 1
Լերմոնտովո համայնքի ավագանու
30.06.2014թ.   N 12 որոշման

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՉԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ, ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ , ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը ՝ 8 ։
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը ՝

| Հաստիքի անվանումը | Հաստիքային միավ. | Պաշտոնային դրույքաչ. (հազար դրամ) |
|---|---|---|
| Համայնքի ղեկավար | 1 | 172.0 |
| Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 | 137.0 |
| Աշխատակազմի քարտուղար | 1 | 135.0 |
| Աշխատակազմի առաջ.մասն.-հաշվապահ | 1 | 125.0 |
| Աշխատակազմի առաջատար մասնագետ | 1 | 125.0 |
| Տեխսպասարկման անձնակազմ | | |
| Բանվոր | 1 | 79.0 |
| Պահակ | 1 | 72.0 |
| Հավաքարար | 1 | 72.0 |

Համայնքի ղեկավար ՝ Է.Չախալյան

Հավելված 2
Լերմոնտովո համայնքի ավագանու
30.06.2014թ.   N 12 որոշման

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆԻ ՏՆՕՐԵՆԻ և ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ , ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը ՝ 3 ։
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը ՝

| Հաստիքի անվանումը | Հաստիքային միավ. | Պաշտոնային դրույքաչ. (հազար դրամ) |
|---|---|---|
| Մշակույթի կենտրոնի տնօրեն | 1 | 70.0 |
| Մշակույթի կենտրոնի հաշվապահ | 1 | 66.2 |
| Մշակույթի կենտրոնի գրադարանավար | 1 | 66.2 |

Համայնքի ղեկավար ՝  Է.Չախալյան